

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի

Նախագահ Տիգրան Մուկույանին

«Դեմոկրատական այլընտրանք» կուսակցության համամասնական ցուցակով

Նոր Հաճն համայնքի ավագանու

թեկնածու Սուրիկ Սուրենյանցից

/հասցե՝ Ք.Երևան, Մարգարյան 31, բն 68

Հեռ՝ 096441131/


22.11.2021թ

Դիմում-բողոք

/ԹԻՎ 28 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 27-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՍՆԱԿԻ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՄԱՍԻՆ/

Սույն թվականի նոյեմբերի 17-ին իմ լիազոր ներկայացուցչի կողմից դիմում է ներկայացվել Թիվ 28 Տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ պարոն Վրեժ Գալոյանին, որով հայտնել եմ, որ 2021 թվականի նոյեմբերի 16-ին «Գազիկ Մաթևոսյան Դաշինք»-ի ավագանու անդամ Գազիկ Մաթևոսյանը ուղերձով դիմել է ընտրողներին հետևյալ գրառմամբ «Պայմանավորված ՀՀ պետական սահմանին տիրող լարված իրավիճակով՝ դադարեցվում է նախընտրական քարոզարշավը» և «Գազիկ Մաթևոսյան Դաշինք» նախընտրական հիմնադրամի ողջ գումարը ուղղվում է «Զինձառայողների ապահովագրության հիմնադրամ»-ին: Գազիկ Մաթևոսյան Դաշինք:

Նշյալ դիմումով հայտնել եմ, որ վերոնշյալ գրառումը, ավելին՝ գրառմամբ նշված գործողությունը /բարեգործությունը/ քարոզարշավի ընթացքում անթույլատրելի է, քանի որ նշյալ գործունեությամբ խախտվել են գործող « ՀՀ Ընտրական օրենսգրքի» դրույթները: Նույն դիմումով հայտնել եմ նաև, որ «Գազիկ Մաթևոսյան Դաշինք»-ի կողմից օրենքի առերևույթ խախտման մասին կատարել եմ ֆեյսբուքյան գրառում, որից կարճ ժամանակ անց մի խումբ անձանց կողմից վնասվել է «Դեմոկրատական այլընտրանք» նախընտրական շտաբի պատին պակցված մեծ պաստառը, որի վնասման պատճառը ըստ իմ համոզման, իմ ֆեյսբուքյան գրառումն է եղել իրավախախտման մասին: Միաժամանակ գրությամբ խնդրել եմ դիմումիս սահմանված կարգով ընթացք տալ և



4.17 45

հարուցել համապատասխան վարույթ՝ հիմք ընդունելով « ՀՀ Ընտրական օրենսգրքի» իմպերատիվ պահանջները:

Իմ կողմից ներկայացված դիմումի հիմքով Թիվ 28 Տարածքային ընտրական հանձնաժողովի /այսուհետ՝ Հանձնաժողով/ կողմից հարուցվել է վարչական վարույթ, որին մասնակցել է իմ լիազոր ներկայացուցիչ Լիլիթ Սիլանյանը:

Հարուցված վարույթի օրը՝ 2021 թվականի նոյեմբերի 19-ին, ժամեր անց կայացվել է Թիվ 28 Տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 27-Ա որոշումը /Այսուհետ՝ Որոշում/, որով ներկայացվել են Հանձնաժողովի հիմնավորումները /պատճառաբանությունները/ և եզրահանգումները:

### **1. Թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի հիմնավորումները.**

Այսպես, համաձայն Որոշման՝ Հանձնաժողովը հարուցված վարույթի շրջանակներում ձեռք բերված նյութերի և տեղեկությունների ուսումնասիրմամբ պարզել է, որ 2021 թվականի նոյեմբերի 17-ին «Գազիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի անունից Գազիկ Մաթևոսյանի կողմից համացանցում տեղադրված է հայտարարություն հետևյալ բովանդակությամբ. «Պայմանավորված ՀՀ պետական սահմանին տիրող լարված իրավիճակով՝ դադարեցվում է նախընտրական քարոզարշավը» և «Գազիկ Մաթևոսյան Դաշինք» նախընտրական հիմնադրամի ողջ գումարը ուղղվում է «Զինձառայողների ապահովագրության հիմնադրամ»-ին»: Որոշմամբ նշվել է նաև, որ Հանձնաժողովը գնահատելով ներկայացված հանգամանքները որպես օպերատիվ լուծում պահանջող հարց, դիմել է «Գազիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքին պարզելու համար, արդյո՞ք «Գազիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքն իր նախընտրական միջոցները փոխանցել է Զինձառայողների հիմնադրամից, ինչին ի պատասխան «Գազիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքը հայտնել է, որ փոխանցում չի կատարվել: Հեռախոսազրույցի ժամանակ «Գազիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքը նախազգուշացվել է Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնակարգումների մասին: Սույն վարչական վարույթի շրջանակներում 19.11.2021թ. նիստին հրավիրվել է և ներկայացվել է «Գազիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Գրիգոր Հալլաբյանը: Հանձնաժողովի հարցին ի պատասխան, արդյո՞ք իրազեկված էք որ նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ /խոստանալ/ դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել /խոստանալ/ ծառայություններ, «Գազիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի ներկայացուցիչ Գրիգոր Հալլաբյանը պատասխանեց, որ դաշինքի հայտարարությունը «պայմանավորված էր ՀՀ պետական սահմանին տիրող լարված իրավիճակով և նպատակ էր հետապնդում հանրությանն իրազեկելու նախընտրական քարոզչության դադարեցման մասին: Ավելին, դաշինքը համոզմունքն է ունեցել, որ երկրում հայտարարվելու է ռազմական դրություն, ինչով պայմանավորված էլ որոշում է ընդունվել դադարեցնել նախընտրական քարոզչությունը և նախընտրական հիմնադրամում եղած միջոցներն ուղղել տվյալ պահին, դաշինքի ներկայացուցչի կարծիքով, ամենաարդիական խնդիրների լուծմանը՝ Զինձառայողների ապահովագրության հիմնադրամին: Դաշինքի ներկայացուցիչը նշեց նաև, նման վարքագծի թիրախն ամենևին ընտրողները չեն եղել, և գտնում է, որ Զինձառայողների